
ԱՐԵՎԱՏԱՐԵՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎԱԿԱՅԵՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԶԵՎԱԽՍԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՎԱՐԴԻԹԵՐ ՄԻՄՈՆՅԱՆ

«Զուգաձևություն» հասկացությունն առնչվում է լեզվական նորմի հետ: Բոլոր զարգացած լեզուները նորմավորված են: Սակայն զուգաձևությունը, տարբերակայնությունը բնորոշ են յուրաքանչյուր զարգացած նորմավորված լեզվի: Չնայած հայերենը նորմավորված և համակարգված լեզու է, բայց, այնուամենայնիվ, զուգաձևությունների գոյությունը չի բացառում այդ հատկանիշը:

Զուգաձևությունների շնորհիվ բառերը ստանում են ոճական երանգավորում, հատկապես չափածոյում՝ բնութագրելով լեզվամտածողության յուրահատուկ պատկերավորությունը: Բառերի նկատմամբ պետք է բժախսնդիր լինել: Ինչպես Յ. Թումանյանն է ասում, «լեզվի հաջող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառնում, բայց, դժբախտաբար, լեզվի վրա անշնորհք մարդիկ շատ են ազդում, և հասկացող ու կիրք ճաշակի տեր մարդկանց միայն մնում է խոսելիս թե գրելիս, փոխ առնելիս թե թարգմանելիս զգույշ լինել ու բարեխսիղդ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհը»¹: Պետք է իմանալ նրա արժեքն ու գինը, ընտրել հիմնավորն ու նպատակայինը: Սովորաբար նույն բառը կարելի է ասել տարբեր կերպով: Ըստ այդմ՝ բովանդակությունը, միտքը կարող են մնալ անփոփոխ, սակայն փոխվում է բուն իսկ մտքի հաղորդման տոնն ու երանգը, որն էլ ազդում է բովանդակության ընկալման վրա՝ առաջացնելով յուրահատուկ արձագանքներ: Օրինակ՝ մեկն ասում է հույսի, լույսի, մյուսը՝ հուսո, լուսո: Երկու տարբերակներն ել ընկալվում են: Յայտնի է, որ պատմական առանձնահատուկ հանգամանքների բերումով հայ ժողովրդի գրական լեզուն երկփեղկված է արևմտահայերեն և արևելահայերեն ճյուղերի՝ տարբերակների: Թե՛ արևմտահայերենը և թե՛ արևելահայերենը հավասարապես հասկանալի են հայ ժողովրդի երկու հատվածներին և հաջողությամբ կատարում են հաղորդակցման միջոցի իրենց դերը: Նրանք երկուսն ել սնվում են միևնույն աղբյուրներից՝ գրաբարից, միջին հայերենից և բարբառներից, և օգտվում են բառակազմական նույն օրենքներից: Գրական լեզվի երկու տարբերակները՝ արևմտահայերենն ու արևելահայերենը, կազմավորվել են երկու տարբեր բարբառների հիման վրա:

Արևելահայերենի հիմքում ընկած է Ում ճյուղին պատկանող Արարատյան բարբառը, արևմտահայերենի հիմքում՝ Կը ճյուղին պատկանող

¹ Յ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1951, էջ 375:

Պոլսի բարեառը: Արևելահայերենը մոտ է գրաբարին իր բառապաշարով և հնչունական կողմով, արևմտահայերենը հեռու է գրաբարից իր արտասանությամբ, թեև բառապաշարով և ձևաբանությամբ մոտ է նրան: Քանի որ պատմական ճակատագրի բերումով արևմտահայերենն ու արևելահայերենը զարգանում էին պատմաբարդական և հասարակական տարրեր պայմաններում, բնական է, որ թեև երկուսն էլ օգտվում էին միևնույն մեսորայան այբուբենից, նրանց միջև տարրերություններ առաջացան քերականության, հնչունաբանության, ինչպես նաև բառապաշարի տեսակետից: Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների փոխհարաբերության հարցը կարևոր նշանակություն ունի և մեծ հետաքրքրություն է ներկայացնում լեզվաբանների համար: Եղած տարրերությունների հարցով տարրեր տեսանկյուններից զբաղվել են Ռ. Աճառյանը, Է. Աղայանը, Գ. Սևակը, Գ. Զահուկյանը, Ա. Սութիասյանը, Ռ. Իշխանյանը, Ս. Գյուլբուդաղյանը, Ս. Գալստյանը և ուրիշներ:

Յայոց լեզվի երկփեղկման ընթացքի ավարտը, ըստ Ռ. Իշխանյանի, կարելի է համարել 19-րդ դարի առաջին կեսը²: Յայ ժողովրդի կյանքում այդ ժամանակաշրջացքում տեղի էր ունենում շատ կարևոր պատմական իրադարձություն: Ռուս-պարսկական պատերազմից հետո՝ 1828 թ. փետրվարի 22-ին, Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Յայաստանը միացավ Ռուսաստանին: Արևելահայ լեզվի զարգացման համար ստեղծվեցին բնականն պայմաններ՝ փոքր-ինչ տանելի վիճակով: Հրատարակվում են բազմաթիվ թերթեր ու ամսագրեր, գիտական և գեղարվեստական գրքեր, իսկ արդեն խորհրդային շրջանում, դաշնալով պետական լեզու, էապես փոխվեց արևելահայերենի կարգավիճակը, մեծացան նրա զարգացման հնարավորությունները:

Այլ էր արևմտահայերենի վիճակը: 1915 թ.՝ Յայոց եղենից առաջ, արևմտահայերենը Արևմտյան Յայաստանի գրական լեզուն էր: Յայության զանգվածային ոչնչացումից հետո այն դարձավ սփյուռքահայ գաղութների խոսակցական, գրական, դպրոցական և գիտական լեզուն:

Այս հոդվածում մեր նպատակն է քննել գրական լեզվի երկու տարրերակների՝ արևմտահայերենի և արևելահայերենի մասնագիտական տերմինաբանության որոշ հարցեր:

Արևմտահայ և արևելահայ տերմինների միջև բառակազմական միջոցների և եղանակների տարրերություն չկա, սակայն կան որոշ տարրերություններ, որոնք լեզվականից բացի ունեն նաև արտապլեզվական պատճաններ: Քանի որ արևմտահայերենի և արևելահայերենի զարգացումը տեղի է ունեցել ինքնուրույնաբար, հետևաբես տերմինային տարրերություններն առաջացել են նրանց՝ իրք առանձին գրական լեզուների զարգացման հետևանքը: Տվյալ առարկայի անվանումը, եթե ընդունվում է հասարակության կողմից, դառնում է կենսունակ ու գործնական, բայց լինում է նաև հակառակը. այսինքն՝ նոր բառը հասարակության կողմից չի ընդունվում, գոյության իրավունք չի ստանում ամենատարբեր պատճառներով՝ անբարեհնչության, դժվարըմբռնելիության, անհասկանալիության,

² Տե՛ս Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը 17-18-րդ դարերում, Եր., 1979, էջ 65:

ամհարմարության և անհարմարության մեջ: Օրինակ՝ արևմտահայերենում որպես օպերա և բալետ բառերի հայերեն համարժեքներ ստեղծեցին երգինե, պարինե բառերը, սակայն դրանք չտարածվեցին: Թեև արևմտահայերենի և արևմտահայերենի տերմինային բառապաշարի տարբերություններն այնքան բազմազան են, որ առերևույթ թվում է, թե դժվար է դրանց միջև որոշակի ընդհանրություններ տեսնել, բայց և այնպես ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան նաև ընդհանուր օրինաչափություններ, որոնցից առավել կարևոր ներն են:

1. Գրական լեզվի երկու ճյուղերում միևնույն բարի հնչյունական-ուղղագրական տարբերակներ: Օրինակ՝ փոշտալ-փոնկտալ, եղինջ-եղիճ, էժան-աժան, վերնագիր-վերագիր:
2. Փոխառյալ նույն տերմինի տարադարձություն: Գրական լեզվի երկու ճյուղերում տերմինը փոխառելու դեպքում առկա են հետևյալ հնչյունական տարբերությունները:
 - 2.1. Արևմտահայերենում ձայնեղ բաղաձայն է, արևմտահայերենում՝ խուլ բաղաձայն: Օրինակ՝ ռադիում-ռատիում, կորրա-կոպրա, բարիտոն-պարիտոն:
 - 2.2. Որոշ դեպքերում կարելի է նկատել հակառակ երևույթը, եթե արևմտահայերենի խուլ բաղաձայնի փոխարեն արևմտահայերենն ունի ձայնեղ բաղաձայն, կամ, ընդհակառակը, արևմտահայերենի խուլ բաղաձայնի փոխարեն արևմտահայերենն ունի շնչեղ բաղաձայն: Օրինակ՝ սոնատ-սոնաթ, պոլկա-բոլքա, պենիցիլին-փենիցիլին:

Հնչյունական այս տարբերությունները հետևանք են երկու գրական լեզվուների բաղաձայնական համակարգերի օրինաչափությունների տարբերության. արևմտահայերը կարդում են այնպես, ինչպես գրված է, իսկ արևմտահայերը կարդում են ձայնեղները շնչեղ խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ դարձնելով: Այդօրինակ տարբերություններն ավելի ակնառու են հատկապես աշխարհագրական անուններում: Օրինակ՝ Չինաստան-ճեն, Աֆրիկա-Ավրիկէ, Պակիստան-Փաքիսթան, Շուշանդիխա-Սկովտիա:

Փոխառյալ տերմինի հնչյունական սղում: Արևմտահայերենում կրկնակ բաղաձայններից մեկն ընկնում է, օրինակ՝ kommunism - կոմունիզմ, dilemma - դիլեմա, libretto - լիբրետո, tennis - թենիս: Տեղի է ունենում բառուավերջի բաղաձայնի կամ ձայնավորի անկում, օրինակ՝ budget - բյուջեն, brigade - բրիգադ: Քիմիական որոշ տերմինների փոխառության ժամանակ արևմտահայերենում նկատվում է վերջածանցի անկում, օրինակ՝ aluminiun - ալյումին, molibdenum - մոլիբդեն, platinum - պլատին:

Քիմիական մի շարք տերմիններ փոխառել են թե արևմտահայերենը, թե արևմտահայերենը այն տարբերությամբ միայն, որ արևմտահայերենը օտար տերմինը փոխառել է նույնությամբ, անփոփոխ, իսկ արևմտահայերենում օտար լեզվի –սու վերջածանցը փոխարինվել է –ոն վերջածանցով. calcium – կալիում – կալիոն, uranium – ուրան – ուրանիոն:

Նույն հասկացության համար արևմտահայերենում և արևմտահայերենում տերմիններն ունեն տարբեր բովանդակություն, դրանք, բնականաբար, զուգաձևություն չենք համարի: Օրինակ՝ landscape-«քնանկար» և «գեղանկարչություն», bibliography-«մատենագիտություն» և «գրախոսություն»:

թյուն», operation-«վիրահատություն» և «գործողություն», participate-«դերայք» և «ընդունելություն», predicate-«ստորոգյալ» և «ստորոգելի», phonetics-«հնչյունաբանություն» և «ձայնագիտություն»:

Հաճախ արևմտահայերեն տարբերակն ավելի լայն իմաստ է արտահայտում, օրինակ՝ vegetable (bot)-«բանջարեղեն» և «բույս, սունկ»: Ինաստի լայնացում կարելի է համարել նաև՝ bandage (med.)-«վիրակապ» և «պատան» օրինակում: Վիրակապը վերջի փառույթ է, իսկ պատանը՝ հանգուցյալ փաթաթելու սպիտակ սավան, և պատանը միայն հազվադեպ կարող է արևելահայերենում արտահայտել փաթաթանի, վիրակապի իմաստ:

Թեև շատ հազվադեպ, բայց կան նաև սակավաթիվ այնպիսի օրինակներ, երբ արևելահայերեն և արևմտահայերեն թարգմանությունները միանգամայն տարբեր իմաստ են արտահայտում, օրինակ՝ second-արևելահայերենում՝ «վայրկյան», իսկ արևմտահայերենում՝ «րոպե» և «վայրկյան», student-«ուսանող» և «դպրոցական», battalion-«գումարտակ» և «վաշտ», company-«վաշտ» և «գումարտակ»:

Լինում են դեպքեր, երբ արևելահայերեն և արևմտահայերեն թարգմանությունները կազմում են հոմանիշային շարք, ընդ որում՝ արևմտահայերեն տարբերակը բարբառային կամ հնացած բառ է և կամ գրաբարյան ձև: Օրինակ՝ rectum (anat.)-«աղիք» և «թափան», cataract (med.)-«կատարուակտ» և «լուսն», thrush (med.)-«կարնասնկախտ» և «բերնածաղիկ», common dropsy (med.)-«ջրզողություն» և «արծուիք», complex (phil.)-«ամբողջություն» և «կմնառույթ, բարդույթ»:

Ավելի հաճախ դիտվում է այն երևույթը, երբ բարդ տերմինների առաջին բաղադրիչները տարբեր են, իսկ երկրորդ բաղադրիչները՝ ընդհանուր: Օրինակ՝ full stop (gram.)-«վերջակետ» և «ավարտակետ», monosyllable (gram.)-«միավանկ» և «եզավանկ», psychiatrist (med.)-«հոգեբույժ» և «մտաբույժ», oculist (med.)-«ակնաբույժ» և «աչաբույժ», rheumatism (med.)-«հողացավ» և «հողատապ», paralytic (med.)-«անդամալույժ» և «հոդալույժ», criterion (phik.)-«չափանիշ» և «ստուգանիշ», convict to death (law)-«մահապարտ» և «գլխապարտ»: Մեկ այլ օրինակ՝ hunger strike-«հացադուլ» և «սմնդադուլ» (polit.): Այս դեպքում թերևս արևմտահայերենն ավելի հարմար է, որովհետև նաև՝ դիմացել է ժամանակի քննությանը, բացի դրանից՝ «հաց» նշանակում է նաև «սնունդ»: Կամ tourist-«զբուսաշրջիկ» և «աշխարհաշրջիկ» օրինակում արևմտահայերենում իմաստն ավելի լայնացված է: Արևելահայերենն ավելի ճիշտ է արտահայտում իմաստը, որովհետև ոչ բոլոր զբոսաշրջիկները կարող են աշխարհը շրջել: Մեկ այլ դեպքում օտար բառը կարող է թարգմանվել էապես տարբեր իմաստներով, օրինակ՝ goalkeeper (sport)-«դարպասապահ» և «սահմանապահ» թարգմանությունների արտահայտած իմաստները տարբեր են, որովհետև դարպասապահ նշանակում է «դարպասը պաշտպանող» մարզիկ, իսկ սահմանապահը՝ «երկրի սահմանը հսկող զինվոր»: «Սահմանապահը» արևելահայերենում մարզական տերմին չէ և միանգամայն այլ տերմինահամակարգ է ներկայացնում:

Օտար բառերի և տերմինների թարգմանությունը, անհարկի օտարաբանությունների դեմ պայքարելը յուրաքանչյուր լեզվի բառակազմական

ու տերմինաշխնության ներքին օրինաչափություններից բխող կանոն են, լեզվի՝ որպես մտածողության ազգային ձևի պահպանման, լեզվի հասկանալիության անհրաժեշտությունից բխող կանոն: Եվ միանգանայն օրինաշափ է ու բնական, որ հավասար պայմաններում նախապատվությունը տրվում է ազգային ձևին: Արևմտահայ տերմիններն ունեն այն առավելությունը, որ լեզվի սեփական միջոցներով են ստեղծված, և ինչպես Աճառյանն է ասում. «Արևմտահայ գրողները ամեն մի եվրոպական բառ, ինչ էլ ուզում է լինի, վտարում են հայերենից նույնիսկ «խլոր, էվոլուցիա, սոցիալգոմ» և նման միջազգային բառերը փոխարինում «կանչոն, բարեշրջություն, ընկերվարություն» տարրերակներով: Ամբողջ աշխարհը ասում է «կինո կամ սինեմա և ռադիո, իսկ արևմտահայերը նույնիսկ Ֆրանսիա և Ամերիկա նստած գրում են դրանց փոխարեն «շարժանկար և ձայնասփյուռ»: Դիկտորն էլ կոչվում է «խոսնակ»³:

Այսօր մեզ խորթ, անհարթ ու անսովոր թվացող որոշ տերմիններ ժամանակի հոլովույթում կարող են ստանալ լայն տարածում, դառնալ սովորական ու բնական և իրենց հաստատուն տեղն ու գործածությունը գտնել մայրենի լեզվում: Նշենք թեկուզ սմբուկ, լոլիկ, հյուլե, եզր, կենաուժ տերմինները, որոնք առայժմ փոքր-ինչ անսովոր են հնչում, բայց դժվար չեն տեսնել, որ արդեն սկսել են գործածվել բադրիշան, պոմիդոր, ասոս, տերմին, էներգիա ձևերին զուգահեռ: Նկատվում է նաև հակառակ երևույթը. ոչ միայն արևմտահայերեն տերմիններն են թափանցում արևելահայերեն, այլև ընդհակառակը՝ արևելահայերեն տերմինները փոխանցվում են արևմտահայերենին: Իսկ դա նշանակում է, որ արևմտահայերենի և արևելահայերենի միջև գոյություն ունի սերտ կապ ու փոխազդեցություն, որը նպաստում է դրանց փոխարարացմանը: Սա միանգամայն բնական է և հույս է ներշնչում, որ թեև անհնար է վերացնել մեր լեզվի երկճյուղությունը, բայց պետք է կարելին արվի, որպեսզի երկու ճյուղերն իրարից ոչ թե հեռանան, այլ փոխադարձաբար կատարելազործվեն, հարստանան նորանուծություններով՝ հետևելով լեզվի զարգացման միտումներին, ճիշտ և ժամանակին դիմակայեն անցանկալի դրսնորումներին:

ВАРДИТЕР СИМОНЯН – К вопросу о формально-семантических взаимоотношениях западноармянских и восточноармянских терминов. – В силу исторических обстоятельств новый армянский язык делится на восточную и западную ветви. Различия между ними являются следствием различных исторических и социальных условий, в которых развивались восточно- и западноармянский языки. В области научной терминологии эти различия, в частности, таковы:

1. в обоих случаях иноязычный термин переводится, но ему придаются разные значения;
2. в восточноармянском иноязычный термин заимствуется, а в западноармянском – переводится;
3. в восточноармянском термин переводится, а в западноармянском – заимствуется.

³ Յ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 473:

VARDITER SIMONYAN – *On the Problem of Formal-Semantic Correlation of Western Armenian and Eastern Armenian Terms.* – According to the historical circumstances the new Armenian literary language is divided into Western and Eastern versions. The difference between the two languages is the result of the various historical and social conditions development of Eastern-Armenian and Western-Armenian types of literary language and adds up to the following:

1. Translation of foreign terms in both types of literary languages conveying different meanings;
2. Adoption of foreign terms into Eastern-Armenian, translation into Western-Armenian;
3. Translation of the term into Eastern-Armenian, adoption of Western-Armenian.